2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դատավորների նկատմամբ ԲԴԽ կողմից քննված կարգապահական վարույթների ամփոփում

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից դիտարկվել են Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2023 թվականի հունվար- հունիս ամիսներին քննված դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 14 վարույթներ, որոնցից 1 վարույթով ներգրավված են եղել թվով 4 դատավորներ:

<u>Վիճակագրական տեղեկություններ.</u>

Կարգապահական վարույթներից 7-ը եղել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների նկատմամբ, մեկական վարույթներով Լոռու, Սյունիքի, Գեղարքունիկի և Արմավիրի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների նկատմամբ, 1 վարույթով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի, 1 վարույթով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի նկատմամբ, և 1 վարույթի շրջանակում 4 դատավորի նկատմամբ՝ Սնանկության դատարանի դատավորի, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի երկու դատավորների նկատմամբ:

<u>Ըստ հարուցող մարմնի</u>

Կարգապահական վարույթներից 2-ը հարուցված է եղել Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից, որոնցից 1-ը մերժվել է ԲԴԽ-ի կողմից, 1-ը՝ բավարարվել՝ դատավորին հայտարարելով նկատողություն:

Վարույթներից 12-ը Արդարադատության նախարարության կողմից, որոնցից 1 վարույթը վերաբերել է 4 դատավորների:

<u>Որոշումների արդյունքները</u>

17 դատավորների առնչությամբ հարուցված միջնորդությունների վերաբերյալ ԲԴԽ կողմից կայացվել են որոշումներ, որոնցով 5 դատավորների վերաբերյալ 5 վարույթներով միջնորդությունը մերժվել է, 1 դատավորի նկատմամբ հարուցված վարույթ կարճվել է՝ դատավորի հրաժարականի դիմումով պայմանավորված:

11 դատավորների նկատմամբ նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը բավարարվել է: 3 դատավորի հայտարարվել է նկատողություն, 1 դատավորի՝ նախազգուշացում, 7 դատավորների լիազորությունները դադարեցվել են, ընդ որում լիազորությունները դադարեցված դատավորներից երեքը ներգրավված են եղել մեկ վարույթում: